

կրային շինուածին մեծագոյն հաստա-  
տութիւն, անքակութիւն և առաձգու-  
թիւն: Հասակն յառաջելով խոհեմու-  
թիւնն ու խաղաղասէր ունակութիւն-  
ներն ալ աճելով, ինչպէս նաև ծան-  
րութիւնն որ ոսկերք պիտի տանին,  
կ'աճին նաև կրային բաղկացուներուն  
համեմատութիւններն ալ, որոնք կու-  
տան ոսկերաց կարևոր պնդութիւնն ու  
ուժեղութիւնը, բայց նուազելով անոնց  
անքակութիւնը ու առաձգութիւնը:

Մինչդեռ ոսկերք տարիներուն յա-  
ռաջանալովը կը փոխեն իրենց մեքենա-  
կան որպիսութիւնքը, կը նուազին թը-  
ւով, հետևաբար կմախքը սակաւաթիւ  
յօդուածներ և նուազ ճկունութիւն  
կ'ունենայ: Տղու մը ոսկերքն, որուն ու-  
նակութիւններն աւելի ճկունութիւն  
մարմնոյ կ'ուզեն, բազմաթիւ են քան  
չափահասին. շատ մը յօդաւորութիւնք  
կ'ոսկերանան մանկութենէ չափահա-  
սութիւն երթալով: Բօդուածոց նոյն  
յառաջատական ոսկերանալուն պատ-  
ճառաւ, չափահասին ոսկերքն աւելի  
բազմաթիւ են քան թէ հասակն առ-  
նողին:

Անդամազնինք հաշուեր են, որ կա-  
տարեալ զարգուն հասակն հասնելով  
մարդուս կմախքին ոսկերքն են 198  
թուով, որոնցմէ 52 բունին կը պատշա-  
ճին, 22 գլխուն. 64 բազկացն ու 60  
սրունիցն:

Այս զարմանալի հաստատուն շի-  
նուածս շարժումն կ'առնու մեքենական  
կազմարանէ մը, որ իբր 400 մկանանց-  
մէ կը կայանայ, որոնցմէ իւրաքանչիւ-  
րը ծայրերէն կպած է մարմնոյն եր-  
կու կիտից, աւելի կամ նուազ հեռու  
մէկմէկէ, զորոնք մկանը կրնայ իրարու  
մօտեցընել իրեն յատուկ կծկողական  
յատկութեան մը զօրութեամբ: Իսկ  
այս մկանները կրաւորական գործիներ  
են և կը շարժին, ինչպէս առաջ ալ ը-  
սինք, ջղաց ձեռքովը, և ասոնք ալ կա-  
մաց հրամանաւն, և հոս կը լմննայ նիւ-  
թական կազմութիւնը ու կը սկսին մը-  
տաւորական և հոգեկան գործողութիւն  
ները:

Կը շարունակուի:

## ՀԻՆ ՔՆԱՐ

Տաղ Իրննդեան Տեսուն.

Կէ՛ն ԿԱՊ

Կայր կոյսն 'ի յայրին կա . . . . նանայր .

Կամէր ծընանել կեանս ազգի մարդկան:

Կայծակնատեսիլ կարմրացայտ ամպւոյն

Կապեալ սիւն լուսոյն կանգնեալ ի վերուստ:

Կարևոր խըմբից կանչեն ի բարձանց

Կենարար ծընաւ կեցուցիչ բազմաց:

Կերպ մի ի գընդէն կարգ մի ի թըւոցն

Կանչեն առ հովիւան կարեւոր ազգմամբ:

Կըրկընեալ առ նա կըրթական մտօք.

Կարեւոր յուսով կանխէր ի բարձանց:

կոչէր խորհրդով կարապետին մայրն .  
Կաքաւէր փութով կարեւոր պառաւն :  
Կորուսեալ Եւայ կողոպտեալ կենօր ,  
Կանգնեցաւ ի վեր , կայր մօտ առ կուսին .  
Կոշկոճեալ ոտիւք կորափոտ անձամբ  
Կանգնեցաւ ի վեր կուսին խոնարհեալ :  
Կարմրազայր<sup>1</sup> այտիւք կապուտակ չրթամբ  
Կոճոպեալ հերօք կաթէր արտասուօք :  
Կեղկեղեալ մարմնովն կարկառէր ըզձեռն .  
Կըրճաթէր զատամուռնն կոծէր յոյժ ըզկուրծն :  
Կանչեալ մեծաձայն կոչեալ զնախահայրն  
Կանգնեալ Աղամայ ի կործանմանէն .  
Կողկողէր ձեռօք կոչէր արտասուօք .  
Կաց կոյս եւ ծընաւ կեանս ազգի մարդկան :  
Կանգնելով հովիւքն կոչ ասեն հօտիցն  
Կապուտակ սուլիցն կումբ առեալ խրմբին :  
Կէտք են երկուցեալ , կայտառք են սարսեալ  
Կարծեալ կէտք ի դէմն , կոծի ծով ալեօք :  
Կայր Տէրն ի վերայ կապուտակ գետոյն ,  
Կամէր մըկրտել Կարապետ աջովն :  
Կայր Հայր ի վերուստ , կանչէր Յովաննու .  
« Կայ դա իմ որդի , դըմա լուարուք » :

---

## ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԻ

---

### ԱՄԵՐԻԿԱ

Չիլէ կամ Չիլի կ'ըսուի Ամերիկայի Ովկիանոսին եզերքը երկնցած ցամաք երկիրը . լեռները հրաբուխներով լեցուն են , և այն պատճառաւ ալ ստէպ երկրաշարժ կ'ըլլայ հոն . հիւսիսային կողմը անապատ է , բայց գետեզերք տեղուանքը շատ բարեբեր . իսկ հարաւային կողմը շատ անտառներ ունի :

Կլիման բարեխառն է և առողջարար . բերքերուն մէջ՝ թէպէտ ոսկին քիչ է , բայց արծաթն ու պղինձն՝ առատ :

Չիլէի ժողովուրդը մէկ ու կէս միլիոնի մօտ է . գեղեցիկ և ուժով մարդիկ են , բնութեամբ զուարթ . 1810ին Սպանիացիներէն գլուխ քաշելով՝ հասարակապետութիւն հաստատեցին . քաղա-

<sup>1</sup> Յօրինակին կարմրադայն :